



## Շաբաթական Ձեկույց 21 հունվար 2013

*Հասկանալ ֆինանսական շուկաները,  
տեղեկատվությունը և վերլուծությունները  
գիտակցված ներդրումների նպատակով*



Ձեզ են ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների երկրորդ հատորի երրորդ հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսատնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, սակայն անդրադառնալով նաև համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ասիայում:


### ***Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝***

- Ամերիկյան մանրածախ վաճառքերը աճեցին կանխատեսվածից ավել՝ խթանվելով նվազող գործազրկության կողմից, բարելավվող տների շուկայից, նվազող գազի գներից և աճող սպառողական ծախսերի կողմից: Մեծածախ վաճառքների գները և արտադրողական գների ինդեքսը նվազեցին՝ մեծացնելով հույսերը տնտեսության վերականգնման ամրապնդման համար:
- Համաշխարհային բանկը նվազեցրեց համաշխարհային աճի իր կանխատեսումները՝ համաձայն որոնց համաշխարհային տնտեսությունը կգրանցի միայն 2.4 տոկոսանոց աճ՝ հիմնականում պայմանավորված գործազրկության բարձր տոկոսով, գործարար հատվածի փոքր վստեխությամբ, ինչպես նաև գործի դրված տնտեսական խիստ միջոցառումներով, որոնք ընդունվեցին եվրոգոնայի ճգնաժամին ի պատասխան:
- Արտացոլելով Եվրոգոնայում տիրող համակարգային թուլությունը՝ Իտալիան կարող է առնվազն 9 միլիարդ եվրոյի (\$12 միլիարդ) կարիք ունենալ, դեֆիցիտի թիրախները իրագործելու համար, քանզի Իտալիայի համար ակնկալվում է տնտեսական նոր անկում և պայքար դեֆիցիտը նվազեցնելու համար:

- Ասիայում տեղի ունեցած զարգացումներից առաջնային էր չինական 7.9 տոկոսանոց աճը, քանզի արտահանումները, արդյունաբերական արտադրանքը և տուրիզմը աճ գրանցեցին, ինչպես նաև ճապոնական կառավարությունը մտահոգված էր, թե մինչև ինչքան կարող է թույլ տալ իենայի նվազումը:


**Ամերիկյան տնտեսության վերականգնումը շարունակում է մնալ թույլ՝**

2012թ. Դեկտեմբերին ամերիկյան մանրածախ վաճառքները կանխատեսվածից մի փոքր ավել աճեցին՝ աճելով 0.5 տոկոսանոց աճ, որը ամենամեծ աճն է հանդիսանում երեք ամիսների ընթացքում՝ հետևելով նմանատիպ աճին 2012թ. Նոյեմբեր ամսին: Ստորև տե՛ս գրաֆիկը:



Աղբյուր՝ US Census Bureau

Մանրածախ վաճառքներում աճի մեծ մասը կապված էր չորս դրական միտումների հետ, որոնց թվում են գործազրկության նվազումը, տների շուկայի վերականգնումը, ավելի ցածր գազի գները և աճող սպառողական ծախսերը: Ընդհանուր առմամբ, մանրածախ վաճառքները 2012թ. աճեցին 5.2 տոկոսով՝ ամրապնդելով 2011թ.-ի 7.9 տոկոսանոց աճը:




Աղբյուր՝ US Census Bureau

Անցած շաբաթ հրապարակված վիճակագրական այլ տվյալները դրական միտում են ցույց տալիս՝ դեկտեմբերին նվազած մեծածախ վաճառքներով, որը նվազում է երրորդ ամիսն անընդմեջ: Սա համընկավ արտադրողական գների PPI ինդեքսի չնչին նվազման հետ, որը 2012թ. Դեկտեմբերին նվազեց 0.2 տոկոսով նախորդ ամսվա 0.8 տոկոսանոց աճից հետո:

Արտահայտելով ամերիկյան տնտեսության վերականգնման խոցելիությունը՝ անցած շաբաթ Միչիգանի Համալսարանի կողմից հրապարակված սպառողական տրակադրությունների ինդեքսը բացահայտեց անկում սպառողական վստահության մեջ՝ ըստ նախնական զեկույցի՝ 2012թ. դեկտեմբերի 72.9-ից նվազելով մինչև 71.3 2013թ. հունվարին: Այս թվերը հանդիսանում են սպառողական վստահության ամենացածր մակարդակը 2011թ. դեկտեմբերից: *Ստորև տե՛ս գրաֆիկը:*

**ԱՄՆ սպառողական վստահություն (եռամյա ցուցանիշ)**



**Աղբյուր՝ Միչիգանի համալսարան**

Նույն ժամանակահատվածի համար ամերիկյան արդյունաբերական արտադրանքը գրանցեց չնչին 0.3 տոկոսանոց աճ՝ պայմանավորված սարքավորումների պահանջարկի աճով: 2012թ. դեկտեմբերին 0.8 տոկոսով աճեց նաև արդյունաբերական արտադրանքը՝ հանդիսանալով ամենաուժեղ հետևողական աճը գրեթե մեկ տարվա ընթացքում: Ամենախոստումնալից տարրը հանդիսանում է էական 2.6 տոկոսանոց աճը շարժիչով մեքենաների և մեքենաների մասերի արտադրության մեջ նախորդ ամսվա ավելի տպավորիչ 5.8 տոկոսանոց թռիչքի ֆոնին:

***Համաշխարհային տնտեսություն***

Համաշխարհային տնտեսության ընդհանուր հեռանկարը նշանավորում էր տնտեսական աճի ավելի ցածր մակարդակներով: Համաձայն Համաշխարհային Բանկի նոր զեկույցի՝ համաշխարհային տնտեսության աճի կանխատեսումները ավելի նվազեցվեցին՝ կազմելով 2.4 տոկոս, ինչը անկում է 2012թ. հունիսին արված 3 տոկոսանոց աճի մակարդակից, որից հետո 2012թ. տնտեսությունը գրանցեց ընդամենը 2.3 տոկոսանոց աճ: Ավելի ցածր հաշվարկները հիմնված էին գործազրկության բարձր մակարդակների վրա, գործարար ցածր վստահության ինչպես նաև եվրոգոնայի ճգնաժամին ի պատասխան գործի դրված տնտեսական խսիտ միջոցառումների վրա:

Ավելի կոնկրետ, Համաշխարհային բանկը կիսով չափ նվազեցնում է իր կանխատեսումները ճապոնական տնտեսության աճի վերաբերյալ՝ այն 2013թ.-ին հասցնելով մինչև 0.8 տոկոս: Բանկը մինչև 1.9 տոկոս նվազեցրեց իր հաշվարկները, եվրոգոնայի համար կանխատեսեց տնտեսական անկման երկրորդ տարին, իսկ Բրազիլիայի, Հնդկաստանի և Մեքսիկայի նման զարգացող շուկաների համար նվազեցրեց կանխատեսումները: Համաշխարհային Բանկի կանխատեսումները զարգացած տնտեսությունների համար ներառեցին ընդհանուր 1.3 տոկոսանոց աճ, տնտեսական աճի հեռանկարը 8.6 տոկոսից նվազեցվեց մինչև 8.4 տոկոս, իսկ Հնդկաստանինը՝ 6.9 տոկոսից մինչև 6.1 տոկոս, կանխատեսվում է, որ երկու տնտեսություններն էլ կամրապնդեն արկարժամկետ համաշխարհային աճը:

### ***Հուսահատեցնող հեռանկար Եվրոպայի համար՝***

Բացահայտելով եվրոգոնայի ավելի խորը համակարգային խոցելիությունը՝ իտալական պաշտոնյաները անցած շաբաթ անցած շաբաթ հայտարարեցին, որ Իտալիան կարող է առնվազն 9 միլիարդ եվրոյի (\$12 միլիարդ) կարիք ունենալ, որպես 2013թ. բյուջետային հավելյալ օգնություն իր դեֆիցիտային թիրախները իրագործելու նպատակով, քանզի երկիրը դեռևս կանգնած է խորացող ճգնաժամի, հարկային ցածր եկամուտների և բորձր գործազրկության առջև: Այս հայտարարությունը հետևեց Իտալիայի Կենտրոնական Բանկի կողմից արված քայլին, որով նվազեցվեց տնտեսության կանխատեսումները՝ 2013թ.-ին կանխատեսելով 1 տոկոսանոց անկում: Սա ավելի դժվարեցնում Իտալիայի նպատակը 2013թ. հասնել ՀՆԱ-ի 1.6 տոկոսանոց դեֆիցիտի թիրախին: Իտալական հաջորդ կառավարության համար, որը կընտրվի փետրվարին, հետընտրական մարտահրավերը կլինի առանցքային քաղաքականությունների ընդունումը. փորձել հավաքել հարկային ավելի մեծ եկամուտներ, պայքարել հարկերից համատարած խուսափելու դեմ, էականորեն նվազեցնել պետական ծախսերը, լուծել պետական սեփականության և ակտիվների խնդիրները, կամ թույլատրել, որ 2013թ. դեֆիցիտը գերազանցի ՀՆԱ-ի երկու տոկոսը:

### ***Հայացք Ասիային՝***

Ասիական տնտեսությունների վրա գերիշխում էր չինական 7.9-ոց չինական աճը, քանզի դեկտեմբերին արտահանումները աճեցին 14.1 տոկոսով, անցյալ տարվա նույն ամսվա համեմատ՝ հանդիսանալով ամենամեծ 12-ամսյա աճը 2012թ. մայիսից: Թեպետ անցած տարի Չինաստանը գրանցեց 13 տարիների ընթացքում իր ամենաթույլ աճը 2012թ. չորրորդ քառորդի շրջադարձը տնտեսության վերականգնման հարցում վստահություն ներշնչեց ներդրողներին: Ի հավելումն սրան՝ չինական տնտեսությունը գրանցեց նաև ՀՆԱ-ի աճ: 2012թ.-ին այն կազմեց 7.8 տոկոս, ինչպես նաև այս նույն ժամանակահատվածի համար աճ գրանցվեց չինական արտահանումներում և արդյունաբերական արտադրանքում: Չինական կառավարությունը փորձեց խթանել այս միտումը 2011թ. դեկտեմբերին 28 տոկոսով մեծացնելով վարկավորումը: Տուրիզմի հատվածի մեծացումը ևս աջակցեց տնտեսական աճին, քանզի 2012թ. չինական տուրիստական հատվածի ընդհանուր եկամուտը կանխատեսվում է, որ կաճի մինչև 15.1 տոկոսով՝ մինչև 2.59 տրիլիոն յուան (\$420 միլիարդ): Կանխատեսվում է, որ չինական տուրիստական հատվածը 2013թ.-ին ևս մեկ աճ կգրանցի, որը կկազմի 14.2 տոկոս, կամ մինչև 2.96 տրիլիոն յուան: Միաժամանակ, ինքնաթիռային ուղևորների քանակը 2012 դեկտեմբերին հասավ 23.8 միլիոնի:

Ճապոնիայի նոր վարչապետի գլխավոր խորհրդականի հայտարարությունում, կառավարությունը զգուշացրեց, որ Ճապոնիայի Բանկը կարիք ունի դանդաղեցնել դրամական մեղմացման իր քաղաքականությունը, եթե ազդեցությունը գների վրա և իենայի արժեզրկումը անցնեն բոլոր սահմանները: Վարչապետ Շինձո Աբեի գլխավոր խորհրդական Կոիչի Համադայի խոսքերով Ճապոնական կառավարությունը մեծ ջանքեր է թափում իենայի

գինը և ազդեցությունը մեծացնելու նպատակով, սակայն այժմ դիտարկում է , թե մինչև ինչքան պետք է թույլատրի ճապոնական արժույթի թուլացումը: Այն բանից հետո, երբ վարչապետը խոստացավ անցնել ավելի ագրեսիվ ֆիսկալ և դրամային գործողությունների, իենայի արժեքը դոլարի համեմատ 10 տոկոսանոց անկում գրանցեց: Անցած շաբաթվա առևտրի ընթացքում իենան նվազեց 0.2 տոկոսով, մինչև 90.10 մեկ դոլարի դիմաց և հասավ 90.21 մակարդակին, որը 2010թ. հունիսից ամենաթույլ մակարդակն է:

***Ապրանքայի շուկաներ՝***

Ապրանքային շուկան առաջնորդում էին ամերիկյան հացահատիկային կուլտուրաների գների աճը՝ համակցված եգիպտացորենի գների աճի հետ, ինչը կապված էր 2012 փետրվարից գների ամենաերկար աճի հետ, ինչպես նաև աճող պահանջարկի պայմաններում կապված եգիպտացորենի ամերիկյան կիսաֆարփիկատների քիչ ծավալների հետ: Անցած շաբաթ հրապարակված ամերիկյան արտադրական տվյալների համաձայն՝ հացահատիկի պահուստները նվազեցին 17 տոկոսով, մինչև 8.03 միլիարդ բուշելներ: Յորենի պաշարները նվազեցին 5 տոկոսով, մինչև 716 միլիոն բուշելներ, իսկ եգիպտացորենինը՝ մինչև 602 միլիոն բուշելներ ,որը 1996թ-ից ամենացածր մակարդակն է:

Համաշխարհային արժույթային շուկայում ասիական արժույթները չորրորդ շաբաթն անընդմեջ աճ գրանցեցին, ինչը հանդիսացավ 2012թ. սեպտեմբերից նրանց ամենաերկար աճը: Սա կապված է համաշխարհային տնտեսության վերականգնման ավելի մեծ հույսի հետ, և խթանվում է չինական տնտեսական աճի, որը երկու տարիների ընթացքում առաջին անգամ նոր թափ հավաքեց, ինչպես նաև ամերիկյան տների շուկայում նշանակալի բարելավման արդյունքում: Ավելի կոնկրետ թայվանական բահթը շաբաթն ավարտեց 2011թ.-ից ամենամեծ շաբաթական աճով՝ հասնելով դոլարի դիմաց տասնյոթամսյա բարձրագույն մակարդակին, քանզի համաշխարհային ներդրումային ֆոնդերը նախընտրեցին բարձր շահութաբերություն ունեցող ակտիվները: Ավելի լայն առումով, ներդրողները ձեռք բերեցին մոտ մեկ միլիարդ դոլարի ավել պարտատոմսեր, քան վաճառել էին անցած շաբաթ՝ ամսվա ընթացքում մասնակի ձեռքբերումները հասցնելով \$2.6 միլիարդ մակարդակին և ներարկելով մոտ \$125 միլիոն թայվանական արժեթղթերի մեջ:

Նույն ժամանակահատվածի համար հնդկական ռուփին արժևորվում էր՝ անցած շաբաթ հասնելով տասնմեկամսյա բարձրագույն կետին, ինչը ստիպեց պետական նավթամշակող ընկերություններին աստիճանաբար բարձրացնել վառելիքի գները՝ մի քայլ, որի նպատակն է նվազեցնել էներգետիկ սուբսիդիաները և խթանել Հնդկաստանի հասարակական ֆինանսական համակարգը: Նմանատիպ քաղաքականությունը չափազանց կարևոր է ծախսերի կիճատման և սուբսիդիաների թիրախները իրագործելու նպատակով , ինչպես նաև հասնելու Հնդկաստանի կառավարության նպատակին նվազեցնել պետական բյուջեի դեֆիցիտը մինչև ՀՆԱ-ի 5.3-ը , պետական պարտատոմսերի վարկանիշի հնարավոր իջեցումից խուսափելու նպատակով:

Ապրանքային շուկայում տեղ գտախ նորություններից կարելի է առանձնացնել անցած շաբաթվա ընթացքում պլատինիումի գների աճը, որը ոսկուց թանկ էր վաճառվում առաջին անգամ 2012թ. մարտից: Որպես ավելի լայն միտումի մաս, սա կապված է համաշխարհային տնտեսության և ներդրողների սպասումների աճող վստահությամբ, որ ԱՄՆ-ի Դաշնային Պահուստային Բանկը պատրաստվում դադարեցնել իր լայնածավալ խթանման ծրագիրը: Ավելի կոնկրետ, անցած շաբաթ պլատինիումի գները փակվեցին ունցիայի դիմաց \$1,700.50 մակարդակի վրա, որը մոտ \$10 դոլարով ավելի է, քան ոսկին, որը անցած շաբաթը ավարտեց ուցիայի դիմաց \$1,690.80 մակարդակի վրա:

Անցած ամսվա ընթացքում պլատինիումի ֆյուչերսները աճեցին ավելի, քան տասը տոկոսով ոսկու ընդամենը 0.7 աճի համեմատ՝ բացահայտելով պլատինիումի գների շուկայական երկարաժամկետ աճող միտում:

Այս նոր միտումը հանդիսանում է վերադարձ ոսկու և պլատինիումի պատմական հարաբերությանը, երբ ոսկու գները գերազանցում են պլատինիումի գներին աճող տնտեսական անորոշության և համաշխարհային տնտեսության թուլության պայմաններում, ինչով և պայմանավորում է ներդրողների հակվածությունը դեպի ոսկին: Պլատինիումի գները, մյուս կողմից, սովորաբար բարձր են լինում ոսկու գներից տնտեսական զարգացման և աճի պարագայում: Ինչպես ոսկին, այնպես էլ պլատինիումը թանկարժեք մետաղներ են համարվում և հաճախ նույն ուղղությանն են շարժվում, սակայն նրանց գները գոյանում են պահանջարկի շատ տարբեր աղբյուրներից: Ավելին, պլատինիումը իր հազվագյուտության պատճառով առավելապես զգայուն է մատակարարման փոփոխությունների հանդեպ և մոտ երեսուն անգամ ավելի հազվադեպ է հանդիպում, քան որկին:

### ***Հայաստանյան հրադարձություններ՝***

Անցած շաբաթ հրապարակած հայտարարության մեջ Հայաստանի կաավարությունը նոր լավատեսություն է հայտնում տնտեսության վերաբերյալ, քանզի կանխատեսվում է, որ այս տարի արդյունաբերական արտադրանքը մեծ աճ կգրանցի՝ ի հեճուկս նրան, ինչ պետական պաշտոնյաները կոչում են «արտաքին անբարենպաստ միջավայր»: Համաձայն պաշտոնական տվյալների՝ Հայաստանի արդյունաբերական արտադրանքի աճը, որը կազմում է ավելի քան Հայաստանի ՀՆԱ-ի մեկ քառորդը, կանխատեսվում է, որ 2013թ. կաճի 9 տոկոսով՝ որոշ չափով պայմանավորված պետության ջանքերով օժանդակելու տեղական արտադրությունը:

Ազգային վիճակագրական ծառայությունը անցած շաբաթ տվյալներ հրապարակեց՝ 2011թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ցուցադրելով ինը տոյոսանոց աճ արդյունաբերական արտադրանքում՝ պայմանավորված ավելի մեծ եկամուտներով հանքարդյունաբերական և էներգետիկ հատվածներում, ինչպես նաև ոգելիչ խմիչքների և ծխախոտի ավելի մեծ արտադրությամբ: Հայաստանի ֆինանսների նախարարությունը percent 2012թ. կանխատեսում է ՀՆԱ-ի 7 տոկոսանոց աճ, իսկ 2013թ.՝ 6 տոկոսանոց:

-Ռիչարդ Գիրագոսյան



TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է համարվում խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում